ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

(ժողովը գումարվել է 2021թ-ի հոկտեմբերի 15-ին)

Դպրոցական ծնողական խորհրդի նիստին մասնակցում էին ծնողական խորհրդի 53 անդամեր(բացակա՝ 0) , ծնողական համայնքի ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Երևանի Ա. Հովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանի դպրոցի 2021-2026թթ. զարգացման ծրագրի ներկայացում:

2. Համաձայն պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի՝ ծնողական խորհրդի անդամների փակ քվեարկություն:

3. Հաշվիչ հանձնաժողովի կազմի հաստատում և փակ քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

1. Երևանի Ա. Հովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանի՝ դպրոցի 2021-2026թթ. զարգացման ծրագրի ներկայացումը: */Զեկուցող՝ Ն. Մանուկյան/*

Հավակնորդը նշեց, որ ծրագիրը կազմված է առաջիկա հնգամյա ժամանակահատվածի համար: Ներկայացրեց դպրոցի առաքելությունը, տվեց դպրոցի ընդհանուր բնութագիրը, մասնավորեց դպրոցի թույլ և ուժեղ կողմերը, նշեց դպրոցի զարգացման ուղղությունները, նպատակները և վերջնարդյունքը: Անդրադարձավ կրթության բարեփոխումների խնդիրներին, որոնց մեջ ընդգծեց մանկավարժների որակական բարելավումը (ատեստավորումը), նախագծային ուսուցման կիրառումը, էկոլոգիական խնդիրները և այլն:

Խոսվեց նաև ֆինանսական մեխանիզմների ներդրման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավման մասին, որոնք ուղղված կլինեն դպրոցի նյութատեխնիկական, շենքային պայմանների բարելավմանը, ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ ծնողներ Հասմիկ Բարսեղյանը,Նազիկ Նազարյանը:

Նշեցին,որ հավակնորդի դպրոցի զարգացման ծրագիրը համակողմանիորեն ներկայացնում է կրթության զարգացման ապահովման հիմնական ուղղությունները, որոշակիորեն վերլուծված էր կոնկրետ անելիքները, ակնկալվող արդյունքները և ռիսկերը:

Որոշեցին՝

Հավանություն տալ զարգացման ծրագրին:

Լսեցին՝ 2. Փակ քվեարկության արդյունքների ամփոփման նպատակով հաշվիչ հանձնաժողով ստեղծելու մասին:

Հաշվիչ հանձնաժողովի կազմում առաջադրվեցին

1) Ն. Նազարյանը
2) Հ.Բարսեղյանը
3) Ա.Գրիգորյանը

Որոշեցին՝

Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը՝

1) Ն. Նազարյանը
2) Հ.Բարսեղյանը
3) Ա.Գրիգորյանը

Համաձայն պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի տեղի ունեցավ ծնողական խորհրդի անդամների փակ քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքներով ծնողական խորհրդի կողմից տնօրենի թեկնածու ընտրվեց հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանը՝53 կողմ, 0 դեմ արդյունքներով :

Որոշեցին՝

Ծնողական խորհրդի թեկնածու հաստատել դպրոցի տնօրենի հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանին :

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ն. Ղազարյան

Քարտուղար՝ Արևհատ Պետրոսյան